

Գեղացին կաշխատի իւր վարժարանն եւ եկեղեցին կանոնաւորութեան մէջ պահելու, եւ կյուսացուի, որ իրեն նպատակին հասնի:

Պճնասիրութիւնն հոս մեծ դեր կ'իսաղայ: Կիները Պէօյիք Տերէյի կիներուն հետ մրցելու համար ամեն զոհողութիւն կ'ընեն, եւ այրերն ալ իրենց քսակները միշտ բաց կը պահեն՝ գոհացնելու համար իրենց կիներուն պահանջումները: Կիները օրը չորս անգամ հագուստ կ'փոխեն, վասնզի նորաձեւութիւնն այս գիւղիս մէջ ամսէ ամիս չփոխուիր, այլ երեք ժամը մի անգամ:

Բամբասանքն հոս ֆրանսերէն տեղի կ'ունենայ:

Չեն պակսիր հոս ազգասէր եւ ուսեալ տիկիներ, որք կ'խորհին ազգին վրայ... *բրիճի փռշիէն* ետքը:

Այրերն երեկոները տուն մը կ'հաւաքուին եւ *վիսթով* կ'զբաղին: Կիներն ալ պարելով, կամ պտոյտ ընելով, կամ դաշնակ զարնելով, կամ երգելով, կամ վիպասանութիւն կարդալով կ'զբօսնուն: Տնական գործերն աղախիններու յանձնուած են:

Օդը մաքուր է: *Թէրճէմանը Էֆքէարի* Տնօրէն Պ. Ճիվէլէկեան Բերայէն հոս կու գայ երբեմն մաքուր օդ առնելու *Թէրճէմանը Հաքիքարի*ն լեզուին փչելու համար:

Գիւղիս մէջ քառասուն տուն կայ Հայու, չորս հարիւր գլխարկ կնկան եւ երկու հազար զոյգ կօշիկ: